

Ցեռամալ մոմիկներ **80 մգ, 150 մգ, 325 մգ:**

Դեղաձև. Ուղիղադիֆային մոմիկներ:

Բաղադրությունը. Յուրաֆանչյուր մոմիկ պարունակում է 80 մգ, 150 մգ և 325 մգ ակտիվ բաղադրատարր պարացետամոլ և օժանդակ նյութեր՝ պինդ հարպ:

Ֆարմակոթերապևտիկ խումբ. Անիլիդներ

Ֆարմակոդինամիկա

Պարացետամոլը պարա-ամինոֆենոլի ածանցյալ է, օժտված է ցավազրկող և ջերմիջեցնող ազդեցությամբ և թույլ արտահայտված հակաբորբոքային ակտիվությամբ:

Ցավազրկող ազդեցության մեխանիզմն ամբողջովին հայտնաբերված չէ, սակայն հնարավոր է պրոստոգլանդինների սինթեզի ընկճումը գլխավորապես ԿՆՇ-ում, որով էլ պայմանավորված է ցավազրկող և ջերմիջեցնող ազդեցությունը:

Պարացետամոլը գերադասելի ընտրության ցավազրկող ու ջերմիջեցնող դեղ է հատկապես սալիցիլատների և ՈՍՀՊ-երի հակացուցմամբ երեխաների համար (Ռեյի համախտանիշի վտանգից ելնելով): Ասպիրինից ավելի պակաս է գրգռում ստամոքսի լորձաթաղանթը: Ի տարբերություն ասպիրինի՝ չի ազդում թրոմբոցիտների ագրեգացիայի և արյունահոսության տևողության վրա: Սովորաբար լավ է տարվում ասպիրինի հանդեպ գերզգայուն հիվանդների կողմից:

Ֆարմակոկինետիկա

Պարացետամոլը լավ է ներծծվում ինչպես ներքին ընդունման, այնպես էլ ուղիղադիֆային կիրառման դեպքում: Արյան մեջ առավելագույն խտությունն ապահովվում է մոմիկի ներդնելուց հետո մոտավորապես 2-3 ժամ անց: Կիսապարբերման փուլը տատանվում է 1-ից մինչև 3 ժամ: Նյութափոխանակվում է առավելապես լյարդում և արտազատվում մեզով՝ գլյուկուրոնիդային և սուլֆատային լծորդիչների ձևով: 5%-ից պակաս արտազատվում է անփոփոխ ձևով:

Կիրառման ցուցումներ

- որպես ջերմիջեցնող միջոց սուր ռեսպիրատոր հիվանդությունների, գրիպի, մանկական վարակների և այլ բորբոքային հիվանդությունների ժամանակ, որոնք ուղեկցվում են ջերմության բարձրացումով, վակցինացիաներից հետո;
- որպես ցավազրկող՝ թույլ եւ չափավոր ցավ (գլխացավ, ատամնացավ, մկանային ցավ ներառյալ գլխաքի, տրավմատիկ ցավերի ժամանակ)

Ցետամալ մոմիկները կիրառելի են հատկապես պարացետամոլի ներքին ընդունման ձեւերն օգտագործել չկարողացող երեխաների համար, հատկապես հետվիրահատական փուլում կամ սրտխառնոցի ու փսխման դեպքում:

#### Հակացուցումներ

- գերզգայունություն պարացետամոլի կամ օժանդակ բաղադրամասերից որևէ մեկի հանդեպ,
- բրոնխային ասթմա, անամնեզում ալերգիա,
- պեպտիկ խոց, ստամոքսաղիքային արյունահոսություններ,
- գյուկոզո-Ց-ֆոսֆատդեհիդրոգենազի պակասորդ:
- լյարդի և երիկամների ֆունկցիայի ծանր խանգարումներ

#### Նախազգուշացումներ

Ցետամալ մոմիկները չպետք է միաժամանակ կիրառվեն պարացետամոլ պարունակող այլ ցավազրկողների հետ: Երիկամային և լյարդային անբավարարությամբ հիվանդները, ելնելով լյարդա- և երիկամաբուժանության վտանգի մեծացումից, պետք է զգուշությամբ կիրառեն:

3-5 օրից ավել պահպանվող ախտանիշների դեպքում դիմեք բժշկին:

3 ամսականից փոքր մանկիկներին համար կիրառել միայն բժշկի նշանակմամբ:

Զկիրառել փորլուծության դեպքում:

Ցանկալի է զգուշություն ցուցաբերել, եթե պարացետամոլը միաժամանակ օգտագործվում է ֆլյուկլոսացիլինի հետ՝ բարձր անիոնային մետաբոլիկ ցիդոզի (HAGMA) բարձր ռիսկի պատճառով, հատկապես երիկամների ծանր խանգարումով, սեպսիսով, թերսնուցմամբ և գլուտատիոնի դեֆիցիտի այլ աղբյուրներով (օրինակ՝ քրոնիկ ալկոհոլիզմով), ինչպես նաև: նրանք, ովքեր օգտագործում են պարացետամոլի առավելագույն օրական չափաբաժիններ: Խորհուրդ է տրվում մանրակրկիտ մոնիտորինգ, ներառյալ մեզի 5-օֆոսֆորալինի չափումը:

Պարացետամոլը կարող է առաջացնել մաշկային լուրջ ռեակցիաներ, ինչպիսիք են սուր ընդհանրացված էկզանտեմատոզ պուստուլոզը, Սթիվենս-Ջոնսոնի համախտանիշը, բուրավոր էպիդերմալ նեկրոլիզը, որը կարող է մահացու լինել: Այս լուրջ մաշկային ռեակցիաների առաջին նշաններում, ինչպես նաև ցանկի կամ զգայունության բարձրացման այլ ռեակցիաների դեպքում, դեղամիջոցի օգտագործումը պետք է դադարեցվի:

Հղիություն և կրծքով կերակրում

## Հղիություն

Հղի կանանց վերաբերյալ տվյալների մեծ ֆանակությունը չի վկայում ոչ արատավոր, ոչ էլ պտղի/նորածնային թունավորության մասին: Համահարակաբանական ուսումնասիրությունները նյարդային զարգացման վերաբերյալ երեխաների մոտ, ովքեր ենթարկվում են պարացետամոլին արգանդում, ցույց են տալիս անորոշ արդյունքներ: Կլինիկական անհրաժեշտության դեպքում պարացետամոլը կարող է օգտագործվել հղիության ընթացքում, սակայն այն պետք է օգտագործվի ամենացածր արդյունավետ չափաբաժնով հնարավորինս կարճ ժամանակում և ամենացածր հաճախականությամբ:

## Կրծքով կերակրելը

Պարացետամոլը արտագատվում է կրծքի կաթում, բայց ոչ կլինիկական նշանակալի ֆանակությամբ: Հրապարակված հասանելի տվյալները չեն հակացուցում կրծքով կերակրմանը:

Կողմնակի երևույթներ

Բուժական դեղաչափերի դեպքում կողմնակի ազդեցությունները հազվադեպ են և ֆիչ արտահայտված: Տեղեկություններ են եղել սրտխառնոցի, փսխման, ստամոքսի ցավի, արյունային ռեակցիաների (թրոմբոցիտոպենիա, նեյտրոպենիա, լեյկոպենիա, ագրանուլոցիտոզ) մասին: Երբեմն սեղ են գտնում մաշկի կարմրությունը, եղնջացանն ու գերզգայունության այլ ռեակցիաներ: Ուղիղ աղիքի լորձաթաղանթի կարմրություն կամ ցավ և լյարդի վնաս:

Կիրառման եղանակ

3-5 ամսական – 80 մգ մոմիկներ

6 ամսականից 3 տարեկան -150 մգ մոմիկներ

4-10 տարեկան – 325 մգ մոմիկներ

Ցետամոլի ուղիղաղիքային մոմիկները ցանկալի է կիրառել մաքրող հոգնայից, կամ աղիների գործելուց հետո: Ցետամոլի միջին միանվագ դոզան կախված է երեխայի քաշից և կազմում է 10-15 մգ/կգ մարմնի քաշին և կարելի է կրկնել օրը 3-4 անգամ: Օրական մաքսիմալ դոզան չպետք է գերազանցի 60մգ/կգ մարմնի քաշի: Նշված դեղաչափի կիրառումը կարելի է կրկնել յուրաքանչյուր 4-6 ժամը 1 անգամ, բայց ոչ՝ 4 անգամից ավել:

Տեղի դեպքում չկիրառել 3 օրից, իսկ ցավը մեղմացնելու համար՝ 5 օրից ավել:

3 ամսականից փոքր մանկիկների համար կիրառել միայն բժշկի նշանակմամբ:

Զգերագանցել նշված դեղաչափը:

Թողարկման ձև

5 ուղիղաղիքային մոմիկներ խցիկում:

2 խցիկ և ներդիր թերթիկ սովորաբար տուփի մեջ:

Պահպանման պայմաններ

Պահպանել  $25^{\circ}\text{C}$ - ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում: Չստեցնել:

Պիտանիության ժամկետը

3 տարի:

Բացթողման կարգ

Առանց դեղատոմսի: